

Իրավունք

Մշակույթ

Հիմնադրվել է 2000 թվականին
www.acrpc.am
Ընկերություն
ibici societas ibi jus

Երկշաբաթաբեր
թիվ 9 (12)
2007 թ. հուլիսի 15

ՕՐԿԱՆՏԵՐՈՍՆ ՈՒ ԷԼԻՏԱՐԱՄԱՆԻԱՆ

Հայտնի ճշմարտություն է, որ ցարական Ռուսաստանում հասարակության ընտրանին հարուստ մտավորականություն էր, որն անդադար պայքարում էր ու բարեփոխումների առաջամարտիկ էր: Եվրոպական երկրներում ընդունված է էլիտա համարել կուտակած որոշակի հարստությանը, բաղաձայն տարբեր գործընթացների վրա ազդող, իրենց երկրի և հայրենակիցների խնդիրներով ու շահերով իսկապես մտահոգ մարդկանց:

Ժամանակին ազնվականությունն ունեցել է իրեն հատուկ պահվածք, ներքին կարգուկանոն, դրանք որևէ կերպ չի շրջանցել՝ ազնվականի իր հեղինակությունը չստվերելու համար: *Բնչպիսի՞ն է այսօր էլիտան մեզանում, ի՞նչ չափանիշներ են հարկավոր էլիտա կամ, որ նույնն է, բարձրաշխարհիկ հանրություն համարվելու համար:* Ըստ երկրյան էլիտան ինչ-որ բանով պետք է առանձնանա, տարբերվի: Թվում է՝ ամենուր հանդիպում ենք օրվա հերոսների, չէ՞ դյուցազունների, սակայն իրականում արդեն երկար տարիներ մեր ունեցած-չունեցածը **օրվա հերոսի** խնդիրն է...

Երանք, ովքեր իրենք համարում են բարձրաշխարհիկ հանրության ներկայացուցիչներ, դժգոհում են, ասենք, մշակութային կյանքի աղքատությունից՝ ամենին հարկ չհամարելով ամիսը գոնե մեկ անգամ իրենց բազառիկ ներկայությանը պատվելու մշակութային «խղճուկ» օջախները, ինչպիսիք են, օրինակ, թատրոնը, թանգարանները... Երանք մի սովոր մասը շքեղ կազմով գրքեր ունի, որոնք, թող ներվի ասել, կարդալու համար չեն, այլ հարմարեցված են կահույքի գույնին: Ասում են շատ դեպքերում սբափեցնող ճշմարտությունները նման են լինում ցավեցնող կոշիկի. եթե այլ եք չկա, դրանց մի կերպ դիմանում են, իսկ հանել-դեն շարտելուց հետո թեթևացած շունչ են քաշում...

Այսօր յուրաքանչյուրն իրեն օրվա հերոս է երևակայում ու փրկիչ-երբեմն թվում է, թե իսկապես հենց այդ յուրաքանչյուրից է կախված այս ազգի կյանքն ու ճակատագիրը: Եվ պատահում է այնպես, որ ազգի կյանքն ու կենսակերպը դառնում են անհավասարակշիռ, իսկ համախ դրանք պայմանավորված են լինում կարծեցյալ հերոսների ամենագոր կամքով: Երբեմն էլ այդ կամքը պարզապես պարտադրվում է հեռուստատեկրաններից, ասենք, օրինակ, մարդիկ հետ են վարժվում դասական երաժշտություն լսելուց, լավ ֆիլմեր դիտելուց, իսկ աճող սերունդն այդ ամենի մասին նվազագույն պատկերացում անգամ չունի. նրան պարտադրվում են էսանձագին շոուներ, որոնք լեզուն ոչ հայերենն է, ոչ էլ որևէ այլ լեզու, պարզապես լեզուների խառնուրդ է՝ նոր՝ *զօխտե-ինչերեն*...

Ամենից հաճախ մեր իրականության մեջ նրանք, ովքեր ունեն գիրք գնելու, թատրոն գնալու պահանջումը, չունեն այդ շռայլությունն իրենց թույլ տալու նվազագույն հնարավորություն...

Էլիտա ներկայացնողներից կամ օրվա հերոսներից ոմանք չափազանց շռայլ են և առատաձեռնությունը համարում են իրենց հաջողության գրավականներից մեկը, ոմանք ողջամտություն բուրդը արտահայտություններ են շռայլում, ոմանք շաբաթը մեկ փոխում են իրենց... կարծիքները, ոմանք տոսկալի համառ են և սխալներն ընդունելու քաջություն չունեն, ուրիշներն էլ պարզապես տանել չեն կարողանում քննադատողներին: Մյուսներն էլ ոչ պճնամուլ են, ոչ պարզախորթան կողմնակից, այլ գտնվում են այդ երկուսի ուղիղ միջ-նակետում...

Բոլոր ժամանակներն էլ թերևս ունեն իրենց բնորոշ էլիտարանահիմն, էլիտար բանն էլ այսօր կարծեք կանաց-կամաց այլ նշանակություն է ձեռք բերում՝ *էլի տար* ու ինչքան կարող ես, ու ինչքան հնարավոր է, ու ինչքան շատ, այնքան լավ... Սա կենսատակ: Սակայն լրջմտորեն շարունակվում է պտտվել *էլիտարախտով* տառապողների բախտի անվիճ, ու հարց է առաջանում, ով բախտակիցներ. մեծ երգիծաբանն արդյոք անտերյալ էր ծուռ հայելիներից, ուր, միգուցե, ամենքս ենք վարակակիր...

Լուսինե ՍԱԳԱԿՅԱՆ

ՀԱԿՈՒ ՊԱՐՈՆՅԱՆ

Կը Համարձակինք ըսելու, որ ոչ վրք միրավորել ուզած ենք և ներկայացուցած ենք անձերն այնպես, ինչպես որ են, և ոչ թե ինչպես որ կուզեն իրենք, և եթե ընթերցողն ստեղծանք կեսերու Հանդիսի, անոնց պատասխանատուն մենք չենք. ո՞ր Հայելին գահաճն Աբիլեն կանդրադարձնե, ո՞ր լեռն սուրբը սասանա կը կրկնե:



Կ Ո Չ

**Հայաստանի Հանրապետության
Մախագահին,
ՀՀ Ազգային ժողովին,
ՀՀ Կառավարությանը,
հասարակական
կազմակերպություններին,
քաղաքական կուսակցություններին,
գանձվածային լրատվամիջոցներին,
ՀՀ քաղաքացիական հասարակության
բոլոր դերակատարներին,
հայ ժողովրդին**

Մինչև 2015 թվականը Հայաստանյակի զարգացման նպատակներում (ՀՁՆ) մշակված առողջապահության, կրթության և ջրի մատակարարման նպատակակետերին հասնելու համար անհրաժեշտ է տարեկան 47 միլիարդ ԱՄՆ դոլար: Յուրաքանչյուր տարի ամբողջ աշխարհում 1 տրիլիոն ԱՄՆ դոլար է ծախսվում ռազմական նպատակներով:

Խմելու ջրի մատչելիությունից զուրկ մարդկանց թիվը կիսով չափ կրճատելու ՀՁՆ-ի իրականացման համար տարեկան անհրաժեշտ է 4 միլիարդ ԱՄՆ դոլար, ինչը եվրոպան յուրաքանչյուր ամիս ծախսում է միայն 22-լցվող ջրերի արտադրության վրա:

Այսօրվա ներդրումների մակարդակի պահպանման դեպքում մինչև 2015 թվականը աշխարհում 2 միլիարդ 170 միլիոն մարդ զրկված է մնալու տարրական առողջապահական ծառայություններից, իսկ 650 միլիոն մարդ չի ունենալու խմելու ջուր:

Աղքատության հարթաշարժան համընդհանուր քարոզարշավ (GCAP) 07.07.07

07.07.07-ը կարևոր նշանակություն ունեցող թվական է ծայրահեղ աղքատության հարթաշարժան, մարդու իրավունքների լիարժեք իրականացման և անհավասարության վերացման համար: Կն միջնակետն է 2000-2015 թվականներին, որոնք ընթացքում աշխարհի

պետությունները հանձն են առել իրականություն դարձնել Հայաստանյակի զարգացման նպատակները:

2000 թվականին Միավորված Ազգերի Կազմակերպությունը աշխարհի ամենաաղքատ բնակչության կենսապայմանների բարելավման համար կազմեց Հայաստանյակի զարգացման նպատակները՝ բաղկացած ութ կետից, որոնք ձգտում են մինչև 2015 թվականը ծայրահեղ աղքատության և սովի վերացման, հիմնական կրթության համատարած ապահովման, գեներային հավասարության օժանդակման և կանանց իրավունքների ընդլայնման, երեխաների մահացության նվազեցման, մայրական առողջության բարելավման, ինչպես նաև պայքարում են ՄԻԱՎ/ԶԻՎԳ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների դեմ, ապահովում են շրջակա միջավայրի պահպանումը և զարգացման նպատակով զլորալ համագործակցություն են ձևավորում:

Անցած յոթ տարիների ընթացքում այս հանձնառությունների իրականացման գործընթացը եղել է շատ դանդաղ և խոչընդոտներով լի: Մնացել է ընդամենը յոթ տարի, և այս պահին իսկ աշխարհի կառավարությունները և քաղաքացիական հասարակությունները պետք է նպատակաուղղված կերպով աշխատեն դրանց իրականացման համար:

Հայաստանյակի զարգացման նպատակների մինչև 2015 թվականի իրականացման գործընթացում **Աղքատության հարթաշարժան համընդհանուր քարոզարշավի** հայաստանյան կոալիցիան մեծապես կարևորում է քաղաքացիական հասարակության գիտակից և ներգործուն դերակատարությունը: Մեր հավաքական ուժերով պահանջեց մեր և աշխարհի պետություններից՝ հարգել իրենց խոստումը:

Վերացնենք աղքատությունը, հարգենք մարդու իրավունքները:

Աղքատության հարթաշարժան համընդհանուր քարոզարշավի հայաստանյան կոալիցիա, 07.07.07

Այցելե՛ք՝ www.whiteband.org



Եթե Յերակլիտի խոսքով առաջ-նորդի մեր ժողովուրդը, իսկպպետ որ պաշտպանված կլինեն յուրաքանչյուրիս և իրավունքները, և ազատությունը: Արդեն տասնվեց տարի է, ինչ Յայատանն անկախ պետություն է: Այս տարիներին շատ խոչընդոտներ փորձեցին հաղթահարել, անկեղծելի շատ իրավիճակներից էլ ցանկ, որոշ դեպքերում այդ էլքը խոչընդոտեց զարգացման գործընթացին, որոշ դեպքերում էլ խթան հանդիսացավ: Մեր նորաստեղծ երկիրը կանգնած էր դժվարին խնդիրների առաջ: Կետք է գոյատևեր գերիշխանություն ունեցող պետությունների պաշտուրջ հայացքի ներքո ու միջամտությանը, լուծեր Յայատանի շրջափակման պատճառով առաջացած տարաբնույթ խնդիրներ, հարթեր երկրաչափոր պատճառած ֆիզիկական և բարոյական վնասները... Փորձեր էին արվում ուղիներ գտնելու նոր պետության տեսողման, գոյատևման ու զարգացման ճանապարհին, և կարևոր խնդիրներից մեկն էլ նորաստեղծ պետության համար օրինատեղծ գործունեությունն էր, քանի որ իրավական պետության գոյությունը պայմանավորված է հասարակական պահանջները բավարարող օրենքներ ունենալու փաստով: Եվ 1995 թվականին ձևավորվեց Ազգային ժողովը՝ որպես օրենսդրական դաշտ տեսողող ներկայացուցչական մարմին: Որքանով է հաջողվում մեր պատգամավորներին գրել օրենքներ, որոնք իսկպպետ կիրառելի են հասարակական կյանքում և պաշտպանում են մարդու իրավունքներն ու ազատությունը՝ կյանքն է ցույց տալիս: Օրենքներ կան, որ երկրի մի բնույթ ունեն, այսինքն, երբ բողոքարկում են խախտված իրավունքները պաշտպանելու նպատակով, օրենքը մեկնաբանում են այնպես, որ կարողանան մեք արագել կատարված խախտումները: Այս սա իսկպպետ արդիական խնդիր է և լուրջ մտտեցում է պահանջում: Ըստ իսկ պետք է կատարվեն օրենսդրական այնպիսի փոփոխություններ, որոնք կբացահայտեն նմանատիպ հակատությունները: Օրենքը պետք է պարզ ու հստակ ձևակերպված լինի: Այսօրինակ իրավունքները թույլ են տալիս ասելու, որ իրավական դաստիարակության կարիքն զգուժ են ոչ միայն մեր հասարակության որոշ ներկայացուցիչներ, այլև իշխանավոր ու ուժայրեր:


Երբ փորձել երեխային ասում են՝ «Չի կարելի արմնել, երբ բոլորը քնած են», արդեն իսկ նրան իրավական դաստիարակություն են տալիս: Երեխային դաստիարակելով բարոյական նորմերով նրան ճակատպարտաստում են հասարակական կյանքում պարտականությունները բարեխղճորեն կատարելու, օրենքները հարգելու և պաշտպանելու գործին:

Յայատանի Յանրապետությունը սահմանադրորեն իրավական պետություն է: Իսկ իրավական պետության պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավապետ են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնք համար լիազորված են օրենսդրությանը:

Յայտնի է, որ ժողովրդավարական երկրում իշխանությունները բաժանված են երեք բևերի՝ գործադիր, օրենսդիր և դատական, որոնք փոխադարձ զսպման, հսկողության և իրավասարակշռության

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

պայմաններում են գործելու:



Ղեկն 17-րդ դարի անգլիացի փիլիսոփա Ջոն Լոկը և 18-րդ դարի ֆրանսիացի փիլիսոփա Շառլ Լուի Մոնտեսքյուն գրում են, թե իշխանության տարանջատման սկզբունքը կարևոր է այն իմաստով, որ իշխանության մյուղեղը, վերահսկելով միմյանց, ապահովում են բաղաբացիների ազատությունը:

Ժողովրդաիշխանության հիմնավորման և ժողովրդավարության զարգացման անհրաժեշտ և բավարար պայմաններից են՝

- իրավական մշակույթը, որը հասարակության անդամների կողմից իրավունքի, իրավական համակարգի դերի և բովանդակության միշտ ընթրումն է, իրավական նորմերի պահանջների ճիշտ և անշեղ կատարման ոգով նրանց դաստիարակումը,

- ժողովրդավարության զարգացումը, որն անմիջականորեն կախված է հասարակական իրավագիտության զարգացման աստիճանից:

Իրավունքի գերակայության ապահովման համար անհրաժեշտ է ամենից առաջ ընդունել կատարյալ, սոցիալական արդարության պահանջներին համապատասխան օրենքներ, քանզի իրա-

Ժողովուրդը ղեք է ղաճՂաճ օրենքը,
որղես ու ղաճաճը,
որղես ու ղաճՂաճ ողբիսղա:

Յերակլիտ

վունքն իր գործնական կիրառությունը գտնում է օրենքների գործողության միջոցով: Այսինքն իրավական պետության մեք օրենքը պետք է ներդաշնորեն համապատասխանի իրավունքին: Մարդկային միտքը բազում դարերի ընթացքում Սոկրատեսից ու Ղլատոնից մինչև մեր օրերը, ձգտել է լուծել այդ խնդիրը: Այն ազգերն ու ժողովուրդները, որոնք հասել են խնդրի լուծմանը կամ ընդհանր մտտեցել դրան, համարվում են բաղաբակիրք և ապրում են բարեկեցիկ կյանքով: Այդ կապակցությամբ լուրջ անկեղծներ ունեն Յայատանի Յանրապետության Ազգային ժողովը, հանրապետության նախագահը և կառավարությունը: Օրինակ, ընտրական գործընթացը մեզանում հարկավոր է հասցնել օրինակալության ու արդարության սկզբունքներին համապատասխանելու աստիճանի: Մեր հասարակության իրավական դաստիարակության պակասն զգացվեց նաև այս տարվա Ազգային ժողովի ընտրությունների գործընթացում: Ցավով էլ խուս, որ ընտրելու իրավունք ունեցող որոշ անձինք ընտրություններին ապաստում էին «Ով փող կտա, նրան էլ կընտրեն» մտածելակերպով: Ապաստում էին այդ փողին և ստացան ու գնացին քվեարկեցին, չգիտեմ հենց այդ փող տղովը՝ օգտին, թե՛ իրենց ընտրությունը կատարեցին: Երկու իրավիճակն էլ դատապարտելի է: Ըստ ՅՂ Ընտրական օրենսգրքի քրեական պատասխանատվություն է նախատեսվում ընտրակաշաք առաջարկողների, օրենքի նորմերը խախտողների համար, և չնայած մի քանի մարդ պատժվեց Ընտրական օրենսգրքի որոշ նորմեր խախտելու համար, սակայն գաղտնիք չէ, որ ոչ բոլոր իրավախախտներն են բացահայտվում ու արժանանում համապատասխան պատժի: Մարդիկ սա տեսնում են, մասնակից դառնում, քննարկում են քննիչարղում: Ապրում են իրավական պետության մեք, իսկ իշխանությունները լուսն են... Նրանք իրենց

իշխանության գերակայության փաստն էին արձանագրել հենց այն քաղաքացիների ձեռքերով, ովքեր դեռ պետք է իրավական դաստիարակություն ստանան: Մա միայն փաստում է, որ իրավական դաստիարակությունն այս պայմաններում չի իրագործվի: Նույնիսկ չգիտեմ լա՛ց լինել, թե՛ ծիծաղել... Այս չփորձումների մեք հույսի մի ճառագայթ փայլատակեց, երբ քաղաքացիներն ընտրության գնացին իրենց հաստատական համոզմունքներով և ընտրեցին ըստ իրենց խղճի արհամարելով ընտրակաշաքը: Մա արդեն քայլ էր դեպի իրավական, բարոյական հասարակություն: Սրանք այն մարդիկ էին, որոնց մոտ արդեն իրավական դաստիարակությունն իր ազդեցությունն էր ունեցել:

«Ա՛յ այն երկրին, որտեղ քաղաքացիներին ու գործերը կաշավարում են ոչ թե օրենքները, այլ ենթակաները, պետերը և դատարանները: Նրանցից յուրաքանչյուրն իրեն համարում է բարձրագույն աստիճանի իմաստուն, և դրանից էլ յոք դայակների խնամած մանուկը մնում է առանց աչքի»,- ասել է Մ.Բ.Կուտուզովը:

Իրավունքի գերակայության հետ մեկտեղ իրավական պետությանը հատուկ է ևս մեկ պարտադիր սկզբունք՝ թույլատրելի է այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով: Այդ սկզբունքը, անշուշտ, վերաբերում է միայն քաղաքացիներին, քանի որ քաղաքացիների պարտականությունները պետության հանդեպ հասնողներն են արձագրված են ինչպես սահմանադրությանը, այնպես էլ ընթացիկ օրենքներին: Իսկ ինչ վերաբերում է պետական մարմիններին, ապա վերջիններս պարտավոր են գործել բացառապես օրենքի շրջանակներում:

Ըստ ՅՂ Սահմանադրության 91-րդ հոդվածի «Յայատանի Յանրապետությունում արդարադատությունն իրակաճանցում են միայն դատարանները Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան»: Սակայն մարդիկ արդար դառնելու, արդար որոշումներ կայացնելու կարիք են ունենում ոչ միայն դատարանների հետ կապված խնդիրներում էլ՝ ընտանիքում, և դպրոցում, և այլուր սպասում ենք արդար վերաբերմունքի սա նշանակում է, որ արդարությունը, լինի գիտակցված, թե ոչ, հասարակական հարաբերությունների հիմք է:

Յուրաքանչյուր անհատ, ով կատանա իրավական կրթություն և կունենա բարոյական բարձր հատկանիշներ, կկարողանա պաշտպանել իր իրավունքները և հարգել ուրիշների իրավունքներն ու ազատությունը: Այս առումով բազմակողմանի և հետևողական գործընթացներ են անհրաժեշտ, ինչպես օրինակ, հաշվի առնել հանրության լայն զանգվածների կարծիքը, իրավական կրթության դասընթացներում ընդգրկել ոչ միայն դպրոցականներին, այլև մեծահասակներին, լուսաբանել իրավական դաշտի գործընթացները և այլն:

«Յուրաքանչյուր երկրում մարդկանց ձևավորելու արվեստն այնպես սերտորեն է կապված կառավարման ձևի հետ, որ հասարակական դաստիարակության գործուն հազիվ թե հնարավոր է որևէ զգալի փոփոխություն՝ առանց բուն պետական կարգի փոփոխությունների»,- տողերի հեղինակն է Կ. Յեվեցիուրը:

Իրավական դաստիարակություն կարելի է տալ այն պետության մեք, որտեղ յուրաքանչյուր պետական այր մտածումն ու գործուն է բացառապես իրավունքի գերակայության պայմաններում, և դա մտածելակերպ ու գործելակերպ է, որտեղ մարդը դիտվում է որպես բարձրագույն արժեք: Ուստի անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր քաղաքացի ստանա իրավական դաստիարակություն և ապրի իրավական պետության մեք որպես քաղաքացիական հասարակության լիիրավ անդամ:

Մարգարիտ ՕՅԻՅԱՆ

Լուսն մարդ, Վանձոր, Օրվակալ Իսկովի անվան (թիվ 23) դպրոցի «Իրավունք» առարկայաշարի ուսուցչուհի

ԻՐԱՎԱՌՆՔ ԵՎ ՄԱՐԳՐԻՏ ԻՐԱՎԱՌՆՔՆԵՐ

Ը Ն Դ Դ Ե Ս

ՄԱՆԿԱԿԱՃԱՌՈՒԹՅԱՆ

Ղուճիսին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (ՅՈՒՆԻՍԵՖ) նշեց Աֆրիկայի երեխայի օրը՝ աջակցելով մանկավարժությունը կանխելու նպատակով ավելի շատ ջանքեր գործադրելու՝ Աֆրիկյան միության կողմից:

«Աշխարհում ամեն տարի մոտ 1.2 միլիոն երեխաներ վաճառվում են ինչպես իրենց երկրներում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, - ասել է հիմնադրամի գործադիր տնօրեն ԱՃՆ Ս. Վենեմանը: Երեխաներին վաճառում են հարկադրելով զբաղել մարմնավաճառությամբ, որպես մանկահասակ զինվորներ ծառայել զինված խմբերին, ապահովել էժան և չվճարվող աշխատանք որպես տնային սպասավորներ կամ մուրացիկներ: Երեխաները ենթարկվում են բռնության, սեռական շահագործման, դաժան արհամարհանքի, ինչպես նաև ՄԻՎԿ-ով վարակվելու վտանգին:

Մանկավաճառությունը կոպտորեն խախտում է պաշտպանված լինելու, ընտանեկան միջավայրում մեծանալու և կրթություն ստանալու նրանց իրավունքը»:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը կղչ է անում կառավարություններին, համայնքներին և ընտանիքներին միասնաբար աշխատել մարդավաճառությունը վերջնականապես կանխելու նպատակով:

Այս միասնական մտտեցման կարևոր տարրերից մեկը պետք է լինի հանցագործների պատիժը: Մարդկանց վաճառք տարելուս տալիս է մոտ 9.5 միլիարդ դոլար գրավելով կազմակերպված հանցագործ հրոսակախմբերին և համաշխարհային մասշտաբով հանգեցնելով կոտորածի սահմանը: Մարդկային վաճառքի հետախույժները խթան են դառնում այլ հանցագործությունների համար:

Ղանձադանցված գործողություն է անհրաժեշտ լուծելու նաև այս հանցագործության հետևում թաքցված սոցիալական և տնտեսական գործունեների խնդիրը:

Մանկավաճառության առանցքային պատճառն արքայադատություններն է: Երեխաները հաճախ զայրակվում-իրապուրվում են այլ երկրներում կամ իրենց սեփական երկրի քաղաքներում եկամտաբեր աշխատանքի խոստումներով: Իրավապետ, սակայն, նրանց վաճառում են իբրև դաժան պայմաններում աշխատելու ամենահարմար և էժան աշխատիչ: Շատ երեխաներ գործունե սեփական կողմից ենթարկվում են ծծծի, ֆիզիկական ու սեռական շահագործման զանազան ստորագրեցիչ ձևերին:

Ղանձադանայիկ զարգացման նպատակներին հասնելը կնկատար ընտանիքների միասնականությանը և կօգնի, որ երեխաները դպրոց հաճախեն: Սրանք կենսականորեն անհրաժեշտ նախազգուշական միջոցներ ու երաշխիքներ են ընդդեմ մանկավաճառության:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը մամդ հաղորդագրություն 2007 թ. հունիս, Նույն Յորք

Հուլիսի 5-ին Հայաստանում նշվեց Սահմանադրության օրը

Յուրաքանչյուր պետության համար հիմնական օրերն են սահմանադրությունը, առանցքային նշանակություն պետք է ունենա ըստ էության լինելով ժողովրդավարության ամրապնդման և զարգացման իրավական երաշխիք:

Հայաստանի Հանրապետությունը սահմանադրորեն իրավական պետություն է, և Սահմանադրությամբ պետք է պաշտպանված լինեն նրանում ամրագրված մարդկային իրավունքներն ու ազատությունները:

Թվում էր, թե մեր հիմնական օրերը պետք է ընծեռնե՞ր ժողովրդավարության զարգացման, մարդու իրավունքների պաշտպանության և, ընդհանրապես, իրավական մշակույթի ձևավորման, քաղաքացիների արժանապատիվ կյանքի ապահովման որակապես նոր հնարավորություններ: Սակայն ՀՀ հիմնական օրերի փոփոխված տարբերակն անգամ լուրջ բարեփոխումների կարիք ունի, մասնավորապես իշխանությունների իրական տարանջատման և դատական իշխանության լիարժեք անկախության ապահովման իմաստով:

Թերևս այդ դեպքում սահմանադրորեն ապրելը յուրաքանչյուրի համար կդառնա կենսառել, յուրաքանչյուրն ու բոլորը հավասար կլինեն օրերի առջև, չեն շրջանցվի օրերը, իսկ մնացյալը կկարգավորի ամենագոր ժամանակը:

19 ՆՈՐ ԵՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

Օրերս Մարդու իրավունքների հայկական դպրոցի (ՄԻԴ) 2006-2007 ուսումնական տարվա 19 շրջանավարտներ ստացան ավարտական վկայականներ: Նրանք ամբողջությամբ յուրացրել են ՄԻԴ ուսուցիչների վերապատրաստման մեկնային դասընթացը և հաջողությամբ հանձնել ստուգաբաններն ու քննությունները:


Շրջանավարտները ներկայացնում են Հայաստանի տարբեր ուսումնական հաստատությունների՝ Երևանի թիվ 53, 100, 178, Լոռու մարզի Պուշկինոյի, Շահումյանի, Վանաձորի (թիվ 5) դպրոցները և «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանը, Շիրակի մարզի Գետի, Արևշատի և Սպանդարյանի, Կոտայքի մարզի Արամուսի, Արզականի և Նոր Հաճնի դպրոցները, Գեղարքունիքի մարզի Սևանի արհեստագործական ուսումնարանը, Տավուշի մարզի Հաղարծինի, Արագածոտնի մարզի Օրգովի, Արարատի մարզի Հայահատի և Վայոց Ձորի մարզի Ջերմուկի (թիվ 3) դպրոցները:

ՄԻԴ մեկնային ուսումնառության ընթացքը թարկացած է 3 առկա հավաքներից (ընդամենը 30-օրյա տևողությամբ), ինչպես նաև 11-ամսյա հեռակա ուսուցումից և կազմակերպվում է համա-



գործակցային ուսուցման եղանակով: Ուսուցումը կազմակերպվում է իրականացվում է ՄԻԴ ուսուցանողների, ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի մեթոդաբանների և փորձագետների թիմի կողմից: Այն իրականացվում է «Հայաստանում իրավական մշակույթի զարգացում» եռամսյա ծրագրի շրջանակում՝ նիդեռլանդական «Միջեկեղեցական համագործակցության զարգացման կազմակերպության» (ICCO) աջակցությամբ:

Սեփ. լրատվություն



ՀԱՅՐԵՆԻՔ-ԱՓՅՈՒՌՔ. ՀԱԿՈՐԳԱԿՄՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՔՆԵՐ

Սփյուռքահայ խոշոր գաղթօջախներից մեկում Լիբանանում, հայրենամվեր ու ազգայնապաշտան լայն գործունեություն է ծավալում ՄԵԾԻ ՏՆՆԸ ԿԻԼԻԿԻՅՑ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ «ՀԱՍԿ» պաշտոնական ամսագիրը՝ պարբերաբար լուսաբանելով նաև գաղթօջախի մտահոգություններով ապրող ու գործող Հայ եկեղեցու համալսարանական ուսանողների միության կազմակերպած հետաքրքիր, ուսանելի դասախոսությունները, թեմատիկ բանավեճերն ու ասուլիսները:

Խոսելով ամսագրի մասին՝ Մարդու իրավունքների գրադարանային ցանցի համակարգող Վարսիկ Մեսրոպյանը նշում է, որ Մարդու իրավունքների Վանաձորի գրադարանն արդեն ունի ամսագրի 2007 թվականի 1-3 համարները, որոնցում տեղ են գտել Աստվածաբանական, պատմական, արխիվային, սփյուռքում երիտասարդների հիմնախնդիրներին առնչվող նյութեր, տարբեր ուսումնասիրություններ: Ներկայացնում ենք 3 ուշագրավ լրատվությունը՝ ըստ «Հասկի»:

ԺՈՂՈՎ ԱՆԹԻԼԻԱՍՈՒՄ

Անթիլիասի Մայրավանքում վերջերս տեղի է ունեցել Քրիստոնյա ուսանողների համաշխարհային համախմբման (World Student Christian Federation) Լիբանանի համընթացի ժողովը:

Մասնակցել են անդամ-միությունների ներկայացուցիչներ: Հայ եկեղեցու համալսարանական

ուսանողների միությունը ներկայացրել է նաև **Վիզեն Ծամպույանը** և **Գարլա Նիժոյանը**:

Ժողովը քննարկել է Լիբանանի ներկա կացության պատճառով հետաձգված գանձազան ծրագրեր, ինչպես նաև Միջին Արևելքի շրջանային հաջորդ քարտուղարի ընտրությունը, որը կայանալու է հուլիսին:

ԹՄՐԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹՅԱՆ

Հայ եկեղեցու համալսարանական ուսանողների միության կենտրոնում (Անթիլիասի Մայրավանք) վերջերս տեղի է ունեցել դասախոսական հատուկ երեկո «Թմրամոլությունը և երիտասարդությունը» թեմայով: Ժամանակակից երիտասարդության համար տագնապահարույց ու մտահոգիչ այս երևույթի դեմ միջազգային զանազան կազմակերպությունների կողմից արդեն իսկ արվել են բազմաթիվ քայլեր:



Գարլոս Նիշոյան

Լիբանանում ևս կան թմրամոլության դեմ պայքարող բազմաթիվ միություններ, որոնց թվում է նաև հայկական «Գորիզոն» կազմակերպությունը, որն ակտիվ պայքար է տանում երիտասարդության համար չարիքի աղբյուր այս ախտի դեմ:

Հանդիպման ընթացքում կազմակերպության երկու ներկայացուցիչներ՝ **Պոլի Գինպաշյանը** և **Հարութ Արապյանը**, մանրամասն լուսաբանել են նյութը խոսում օրինակներով ցույց տալով այն բոլոր վտանգները, որոնց ենթարկվում է թմրամոլը՝ քայքայվելով ինչպես ֆիզիկապես, այնպես էլ հոգեպես:

Դասախոսության ավարտին ներկայանր իրենց հետաքրքրող հարցերով դիմել են դասընթացավարներին ստանալով համարժեք պատասխաններ:

Այս միջոցառումը զգուշավորության յուրատեսակ ահազանց էր, եթե նկատի ունենանք, որ համալսարանական միջավայրում ուսանողներն անընդհատ շփվում են տարբեր միջավայրերից եկած ուսանողների հետ:

Դասախոսությունը նաև մարտահրավեր էր թմրամոլության դեմ հավաքական պայքար նախաձեռնելու առումով:

ԽԱՈՆ

ՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«խառն ամուսնության երևույթը մեր ժողովրդի կյանքում» թեմայով վերջերս դասախոսություն է ընթերցվել Հայ եկեղեցու համալսարանական ուսանողների միության կենտրոնում: Բանախոս է եղել լիբանանահայ հայտնի հոգեբան, դիպլոմ **Ռուպեր Գարագաշը**: Լինելով տարբեր ազգերի պատկանող ծնողների զավակ և հետևաբար՝ առավել քաջատեղյակ, նա նյութը ներկայացրել է բոլոր մանրամասներով: Ռ. Գարագաշը թվել է խառն ամուսնություններին նպաստող հնարավոր պատճառները՝ հարցը դիտելով միջավայրի ու համաշխարհայնացման (գլոբալացման) դիտակետից:

Բազմամշակույթ ու բազմացեղ մարդկանց միասին ապրելու բնական հետևանքներից մեկը համարելով խառն ամուսնությունը բանախոսը ներկայացրել է հոգեբանական բարդությունները, առաջացող դժվարություններն ու դրանց հետ կապված մտահոգությունները:

Երևույթը դիտարկելով հատկապես պահպանողական ժողովուրդների կյանքում նա խոսել է խառն ամուսնությունների առաջ բերած բացասական երևույթների մասին:

Հանդիպման ընթացքում հնչել են Արևմուտքի երկրներում լայն տարածում գտած և անխուսափելի թվացող

այս երևույթին առնչվող հարցեր: Եզրափակիչ խոսքում Ռ. Գարագաշը բարձր է գնահատել Հայ համալսարանական ուսանողների միության գործունեությունը: Նա նշել է, որ միությունն ազգային ավանդույթներն ու սրբությունները պահպանելու և բնականոն սերնդափոխություն ապահովելու առումով շատ կարևոր աշխատանք է իրականացնում և կարող է կայուն պատվար լինել օտարամուտ բոլոր տեսակի երևույթների դեմ:



Ռուպեր Գարագաշ

ԿՐԹԱԿԱՆ ՈՒՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պատմական յուրաքանչյուր հասարակարգ ունի իր գաղափարախոսությունը, կացութեանն ու բնորոշ առանձնահատկությունները և պահանջուն է համապատասխան արժեքներ կրող հասարակություն, որի ձևավորման համար, անկասկած, որոշիչ դերը պատկանում է կրթության համակարգին և, մասնավորապես, հանրակրթությանը:

Կրթության դերն ու նշանակությունը մեծ է հատկապես անցումային ժամանակահատվածներում: Այս դեպքում անհրաժեշտ է ոչ միայն բարեփոխել կրթական համակարգը նոր արժեքային համակարգ կրող քաղաքացիի ձևավորելու համար, այլ նաև կարիք կա միջոցներ ձեռնարկելու համակարգի ազդեցությունից դուրս գտնվող քաղաքացիներին նոր հասարակարգի ոգով դաստիարակելու համար: Հակառակ դեպքում հասարակարգի կայացումը կկատարվի սերնդափոխության (ընդ որում մի քանի սերնդի) միջոցով, որն, անկասկած, ավելի երկար ճանապարհ է:

Յետևաբար՝ կշահեն այն երկրները, որոնք հենց անցումային ժամանակաշրջանում խոշոր ներդրումներ են կատարում կրթության ոլորտի գործազմում մեջ (օր.՝ Ճապոնիայ, Հարավային Կորեա, Իտալիայի, ԱՄՆ):

Հայաստանում անցումային ժամանակաշրջանի սկիզբն ուղեկցվեց 1988-1994 թթ. իրադարձություններով (երկրաշարժ, պատերազմական իրավիճակ), որոնք հետին պլան մղեցին կրթական ոլորտը: Որպես հետևանք, ունեցանք մեր ժողովրդավարական ինչպիսիք երկիր և նախկին (միանգամային տարբեր) հասարակարգի արժեքներով ապրող հասարակություն: Սրանով էլ հիմնականում պայմանավորվեցին երկրում բազմատեսակ արատավոր երևույթներ՝ կոռուպցիա, անպատժելիություն, սոցիալական բևեռացում, չքավորություն, գործազրկություն, գրագիտության զգալի անկում, օտարաբնույթ «արժեքների» ներմուծում: Ի՞նչ էլքեր կան ստեղծված իրավիճակից դուրս գալու և հայ ազգին վայել հասարակություն կերտելու համար: Կարո՞ղ ենք վերականգնել արդյոք երբեմնի մեր ունեցած ուրույն տեղը համաշխարհային մշակույթի և քաղաքակրթության մեջ: Այս հարցերն այսօր շատերին են հուզում՝ հասարակ քաղաքացիներից մինչև մտավորական և պետական գործիչներ:

Ստորև փորձենք դատողություններ անել մշակված հարցերի շուրջ:

Ի՞նչպես վերևում ասացինք, ստեղծված իրավիճակից դուրս գալու կայուն և հեռանկարային քայլերը կապված են կրթության համակարգի և առաջնահերթ հանրակրթության արմատական բարեփոխումների հետ:

Անվիճելի է, որ այսօր հանրակրթությունն իր ձևով և բովանդակությամբ գրեթե սպառել է իրեն և չի կարող հասարակությանն ապահովել ժողովրդավարական արժեքներ կրող քաղաքացիներով: Ներկայիս հանրակրթությունը հիմնականում ուղղված է գիտելիք հաղորդելուն, մինչդեռ կրթության նպատակը ժողովրդավարական հասարակարգի պայմաններում նաև անհատի ձևավորումն ու դաստիարակումն է, որը հնարավոր չէ իրականացնել միայն գիտելիք հաղորդելու միջոցով:

Յետևապես, հնարավորինս արագ պետք է սկսել կրթության ոլորտի բարեփոխումները: Հանուն ճշմարտության պետք է մշել, որ օրենսդրական առումով այդ բարեփոխումներն արդեն

սկսվել են: 2004 թ.-ին ՀՀ կառավարությունը հաստատեց կրթական համակարգի զարգացման համար շրջադարձային բնույթ կրող մի փաստաթուղթ հանրակրթության պետական կրթակարգը (այսուհետ կրթակարգ): Այս փաստաթուղթը, որն առաջիկայում առաջնորդող է հանդիսանալու հանրակրթության զարգացման համար, գրեթե իդեալական է մշակված և հնարավորություն է տալիս լավատեսորեն տրամադրվելու հանրակրթության զարգացման, հետևապես նաև երկրի ապագայի նկատմամբ: Կրթակարգում նկարագրված շրջանավարտի կատարելատիպին համապատասխան արժեքներ կրող քաղաքացիներ ունենալու դեպքում (խոսքը վերաբերում է յուրաքանչյուր քաղաքացու, այլ ոչ թե մի քանի անհատների), Հայաստանն, անկասկած, ապագայում հավակնում է կանգնի կոչել, ինչն, անկասկած, շատ ավելի լուրջ ջանքեր է պահանջում:

Ցավոք, Կրթակարգի իրականացման ուղղությամբ կատարվող քայլերն առայժմ անորոշ են, և առկա արդյունքները չեն բավարարում: Կան լուրջ խնդիրներ, որոնք երբեք խոչընդոտում են հայ ազգի ինքնատիպ հեռանկար հանդիսացող այս կարևոր գործի իրականացմանը:

Կրթության կազմակերպման ստորև ներկայացված կառուցվածքային բաղադրիչների նկատմամբ մոտեցումներն արմատապես պետք է փոխվեն, որպեսզի կրթակարգն իրականություն դառնա:

Կրթության ձևը
Անհրաժեշտ է, որ հանրակրթությունն ապահովի անհատական մոտեցում յուրաքանչյուր աշակերտին և ապահովի բարձր կրթական մակարդակ յուրաքանչյուրի համար (*այս մասին մշվում է նաև Կրթակարգում, էջ 15, կետ 12.2, 12.3*): Պետք է ընդունել, որ յուրաքանչյուր աշակերտ անհատականություն է և կարող է գերազանց սովորել. դպրոցի սրբազան պարտականությունն է օգնել նրան դրսևանելու իրեն:

Ի վերջո, ապագան այն ազգերինն է, որոնք ունեն ուժեղ սերունդ և այդ սերունդը կրող և դաստիարակող պայմիտի կրթական համակարգ, որը պատասխանատու է տվյալ հասարակարգի ոգուն համարժեք յուրաքանչյուր անհատի որակյալ կրթության և դաստիարակության համար:

Գործող դաս-դասարանային համակարգն իր կառուցվածքով անկարող է այն ապահովել:

Կրթության բովանդակությունը
Թե՛ հանրակրթության, թե՛ բուհական և հետբուհական կրթության բովանդակությունը պետք է հիմնված լինի ազգային գաղափարախոսության հիմնադրույթների վրա (ներկայումս ուրվագծվող գաղափարախոսական հիմնադրույթներ են համարվում քրիստոնեական, ազգային, մշակութային, ժողովրդավարական արժեքների, ավանդույթների պահպանումն ու սերմանումը): Հենց գաղափարախոսական հիմքերն են պատկերում ազգի տեսլականը և սահմանում կրթության նպատակները: Այս տեսանկյունից ուշադրություն պետք է դարձվի նաև նոր առարկաների ներմուծմանը և ուսումնական նոր նյութերի մշակմանը:

Անկալարժական ռեսուրսներ

Լուրջ փոփոխությունների պետք է ենթարկվեն ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները: Ուսուցիչը պետք է լինի ուսումնական գործընթացի համակարգողը, իսկ իրենց ուսումնական կյանքը դպրոցում պետք է կազմակերպեն աշակերտները: Միայն իրական ժողովրդավար կյանքով ապրելու դեպքում նրանք կարող են ձեռք բերել համապատասխան որակներ և անտություններ:

Ժողովրդավարական հասարակարգի պահանջներին համապատասխան աշակերտներ կրթելու և դաստիարակելու համար անհրաժեշտ է նաև, որ ուսուցիչն ինքը կրի այդ արժեքները, քանզի ուսուցիչի կերպարը օրինակ է աշակերտի համար: Միաժամանակ կարևոր է, որ ուսուցիչը գիտակցի իր առաքելությունը. լինի իր գործի նվիրյալը և աշխատի առաջելագույն շահագրգռվածությամբ:

Ցավով պետք է մշել, որ այսօր ուսուցիչը հայտնվել է անօգնական և հուսահատ վիճակում: Ուսուցիչ գերխնդիրն այսօր դարձել է դասարանում իր արժանապատվությունը բարձր պահելը (հարկ է փաստել, ոչ բոլորին է դա հաջողվում), իսկ սերնդի կրթությունը և դաստիարակությունը, անկառավարելի (30-40 աշակերտ) չափերի հասնող դասարաններում, վաղուց մղված է հետին պլան:

Այնպիսով է, որ տիտանական աշխատանք է պահանջվում մանկավարժական կարգերի պատրաստման և վերապատրաստման համար, և այդ աշխատանքը պետք է լուրջ հիմքերի վրա դնել հենց մանկավարժական բուհերից սկսած: Իսկ ուսուցիչների վերապատրաստման ներկա գործընթացը, մեղմ սասած, անբավարար է:

Աշխատանքը ընտանիքի հետ

Երեխան մշտապես ենթարկվում է երեք հիմնական միջավայրերի ազդեցությանը՝ ընտանիք, դպրոց, բակ (շրջապատ): Թե միջավայրերից որը կան որոնք գերիշխող կլինեն երեխայի զարգացման շրջանում, դրանով պայմանավորված կլինի երեխայի ապագա կերպարի ձևավորումը: Այս պարագայում առանձնահատուկ կարևորություն է ստանում դպրոց-ընտանիք համագործակցությունը:

Բնականաբար, մեր այսօրվա «ծնողական ժողովների» և «ծնողախորհուրդների» պարագայում այս համագործակցության մասին մտածելը ամենթեք է թվում: Կարիք կա լրջորեն բարեփոխելու ուսուցիչ-ծնող հարաբերությունը: Միայն դպրոց-ընտանիք, ուսուցիչ-ծնող ներդաշնակ և գերիշխող ազդեցությունը կարող է ետ պահել երեխային բակի հնարավոր վնասակար ազդեցությունից: Այս դեպքում կարելի է անկեղծել նաև երեխայի կողմից բակի բացասական միջավայրի որոշակի փոփոխություն: Ավելի ուշ՝ հեռանկարում, ուժեղ դպրոց ունենալու դեպքում, հնարավոր կլինի նաև դպրոցի միջոցով ընտանիքի արժեքային համակարգի փոփոխություն հանգեցնել, որը նույնպես էական մշակութային կունենա ժողովրդավարության կայացման համար:

Իրավունքների և ազատությունների սահմանը ժողովրդավարական հասարակարգում

Ժողովրդավարական հասարակարգում իրավունքների և ազատությունների սահմանը յուրաքանչյուր ժողովրդի ընկալում և ընտրում է յուրովի: Այս հարցն ունի անկյունաքարային նշանակություն հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, այդ թվում



կրթության բովանդակության սահմանման հարցում: Եվ այստեղ է, որ նախքան հասարակարգին անցնելու յուրաքանչյուր ժողովուրդ պետք է հստակ որոշի այդ սահմանը՝ հիմնվելով ազգային առանձնահատկությունների և արժեքների վրա:

Այն, ինչ տիրում է այսօր մեր երկրում, վստահաբար կարող ենք անվանել տարբեր երկրներից «պատժենահանված ժողովրդավարություն»: Իրավունքների և ազատությունների համարժեք ընկալմամբ, որտեղ հաշվի չեն առնվում մեր ազգային արժեքներն ու առանձնահատկությունները: Սա հետևանք է դարձել բազմաթիվ օտարամետ և հայ ազգին անվայել «արժեքների» ներմուծման, որոնք մեծ վնաս են հասցնում և դեռ կշարունակվեն իրենց ավերիչ ազդեցությունը, մինչև մենք ինքներս կգիտակցենք այդ ազատությունների սահմանները դնելու և այն մեր քրիստոնեական հավատքով ամրացնելու կարևորությունը:

Ժողովրդավարական մոտեցումներն անհրաժեշտ են հասարակական բոլոր հարաբերություններում (այդ թվում նաև հասարակարգի բջիջը հանդիսացող ընտանիքում), սակայն դրանք պետք է հիմնված լինեն քրիստոնեական արժեքների և ազատությունների վրա: Այս դեպքում իրավունքների և ազատությունների ամուր սահմանները կլինեն Աստվածայնացյալ կանոնները և պատվիրանները, որոնք մեր օրերում համաատարած ուղմահարվում են:

Ի հաստատումն վերոնշյալի, մեր ազգը պետք է ունենա հստակ մշակված, քրիստոնեական և ժողովրդավարական արժեքների վրա հիմնված ազգային գաղափարախոսություն, որը պիտի հասանելի լինի բոլորին, գիտակցվի յուրաքանչյուր հայի կողմից և ներարկվի մատաղ սերնդին հանրակրթության միջոցով:

Չպետք է մոռանալ, որ դարեր շարունակ քրիստոնեությունն է պահպանել մեր ազգն ու ինքնությունը: Այսօր ևս միայն քրիստոնեական հավատքն է ի գորու արմատապես փոխելու մեր կյանքը, վերականգնելու հայի մշտանորոգ կամոնական կերպարը և փրկելու դեպի համընդհանուրացման երախը գլորվող մեր արժեքային համակարգը:

Լինենք լավատես և համոզված, որ հայ ազգն ի գորու է միավորվելու և համառոտ ջանքերով հաղթահարելու վերոնշյալ բոլոր ռիզիկոսությունները և համաշխարհային քաղաքակրթության մեջ կրկնելու սեփական արժեքները զարգացնող, այլ ոչ թե օտարամետ «արժեքներ» ներմուծող ժողովուրդ: Սա յուրաքանչյուր հայի սրբազան պարտքն է՝ անկախ հասարակության մեջ նրա գրաված դիրքից:

Հակոբ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՒՍՅՈՒՄ

Պրիվոյնյե երիտասարդ համայնք է, Լոռու մարզի տարաբնակ ամենամեծ գյուղը 1140 բնակիչներով և բազում խնդիրներով, 429 տնտեսությունից 139-ը ռուսական համայնքի ներկայացուցիչներ են: Երևանի ներքին գրասենյակում 1988թ.-ի երկրաշարժից հետո գրված են ռուսական դպրոց գնալու հնարավորությունը: Ինչպես մեկնաբանում է գյուղապետ Ռազմիկ Վարդանյանը, «ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ռուսական համայնքի ներկայացուցիչների մի մասը գնաց, քիչ թվով երեխաներ մնացին, և ճակխիմ առաջին դասարանցիները տասներորդն ավարտեցին: Նպատակահարմար չէր տարբեր տարիքի մի քանի տասնյակ երեխաների համար դպրոց պահելը, այդպես էլ փակվեց և այլևս չվերաբացվեց»:

Այժմ գյուղի միջնակարգ դպրոցում ռուսական մեկ դասարան է միայն գործում, որտեղ հաճախում են տարբեր տարիքի երեխաները. սա խնդրի հնարավոր լուծումն էր:

Գյուղում մանկապարտեզ, մշակույթի տուն, նույնիսկ գրադպարան չկա: Ռուսական համայնքի հոգևոր և մշակութային ավանդույթները պահպանող միակ օջախը եկեղեցին է, որը, սակայն, երկրաշարժից հետո կիսավեր կիճակում է: Խարխուլ եկեղեցուն գտնվելը նույնիսկ վտանգավոր է, այդ իսկ պատ-

Պ Ր Ի Վ Ո Ւ Ն Ո Յ Ե

ճառով գյուղացիները եկեղեցու գույքը տեղափոխել են մուտքի մոտ և բավարարվում են փոքրիկ այդ տարածքում աղոթելով: Երանց համար շատ կարևոր է քեկուզ այդ փոքրիկ հատվածը սրբորեն պահպանելը:

Գյուղի տարեցները չեն էլ հիշում, թե վերջին անգամ երբ են իրենց համայնքը բարվոք վիճակում տեսել: Չմայած որ համայնքը շատ մոտ է մարզկենտրոնին, այնուամենայնիվ, այստեղ նույնիսկ տարրական կոմունալ հարմարություններ չկան. բողոքները հիմնականում անդրակ և ոչ բավարար ջրին են վերաբերում: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանզի գյուղը մտնող ջրատար խողովակ չկա. ջուրը բնակիչներին է հասնում ինքնահոս եղանակով: Կարծես այդ էլ քիչ է, գյուղի ոչ բոլոր բնակատեղիները չեն իրենց քաղաքային միջավայրից ջուր ունեն, թեև գյուղացիները մի քանի աղբյուրներ են սարքել: «Շատ դժգոհություն մի ամբողջ թաղամաս կորուստ-անցնում են, որ մի դույլ ջուր բերես»,- բողոքում է Պրիվոյնյեի իր հայերենից համարող Նադեժդա Իվանովնան:

Բնակիչների համար գլխացավածն է նաև կարգին ճանապարհ չունենալը, որը մեկ այլ խնդրի պատճառ է դառնում. ավտոբուսն աշխատում է շաբաթական միայն երկու օր: Ավելացնենք, որ գյուղը գրկված է նույնիսկ հեռա-

խոսից և փոստային ծառայությունից...

Միակ բանը, որից բողոքներ չունեն, հողատարածքներն են: Պրիվոյնյեի համայնքի բնակիչներն զբաղվում են անասնապահությամբ ու գյուղատնտեսությամբ, սակայն այստեղ էլ խնդիրներից չեն խուսափում: «Նախ ոռոգման ջուր չլինելու պատճառով հողային ղեկավարները Սատոն ոռոգման ջրով վրա»:



Սատված մի արասցե, եթե երաշտ կամ կարկուտ է լինում, կորուստները կրկնակապակվում են: Կորցնում ենք բերքը և հույսը, թե զոնե հաջորդ տարի հավաքական ուժերով հնարավոր կլինի գյուղատնտեսության գնել: Գյուղատնտեսական բոլոր աշխատանքները կատարվում են բացառապես ձեռքով»,-

տրոնջում են գյուղացիները:

Բողոքում են նաև դիվալտելիցի ու այլ անհրաժեշտ ապրանքների քանակությունից և ապա՝ ցածր կենսաթոշակից, որով հնարավոր չէ հոգալ ամենաչնչին կարիքները:

Չմայած այս բոլոր խնդիրներին ռուսական համայնքի ներկայացուցիչները չեն վախժանվում, որովհետև բախտակից հայերի հետ ապրում են հաշտ ու խաղաղ:

«Թեկուզ փոքրաթիվ ենք, չենք կարող սանել, թե քիչ ենք կամ, ինչպես ստում են, փորձումսանություն ենք, նշում է Տաշիրի տարածաշրջանում ռուսական համայնքի ղեկավար Ֆյոդոր Չոնիկովը: Մեզ մոտ ամեն ինչ ընդհանուր է հոգանել էլ, ուրախությունն էլ, ուստի հարգանքը փոխադարձ է. հայերն էլ ռուսական համայնքի ներկայացուցիչներին փորձումսանություն չեն համարում: Գյուղում խառն ամուսնություններն էլ արդեն սովորական են դարձել»:

Ֆյոդոր Չոնիկովը նաև նշում է, որ Չայաստանում ռուսական ամենամեծ համայնքը Տաշիրի տարածաշրջանում է՝ 350 ընտանիք, իսկ միայն Պրիվոյնյեում շուրջ այդպես ռուսական համայնքի ներկայացուցիչ է: Երևանում ապրում են հույս ունենալով, որ հեռավորեցնելով մեկ համայնքային խնդիրները...

Նեյի ԴԱՎԹՅԱՆ

Փառք Սատոն, որ ստիստության համար տուրքեր չկան: Այլպես մեզ բոլորիս է սնանկացում էր սպասում: Դ. Ֆոնժիգին

Իսկպես, ինչքան ստիստություն, խաբեություն, կեղծոք, խարդախություն, գեղծարարություն գոյություն ունեն մեր հասարակությունում: Զորքիհակ, առաքինություն, ազնվություն բառերը արդեն ավելի ու ավելի հավաքագրվել են հանդիպում: Երբեք բառիմաստները փոխատեղվում-խառնվում են. օրինավոր մարդ եք համարում գողին, խաբեբային... Իսկ ի՞նչ է մնում հասարակությանը խաբեությունից: Ընչու չեն օժանդակում ընդհատել էլ պարտավոր դեղում է հայտնվում:

Յիշենք 1988-ի աղետալի երկրաշարժը: Առանց համապատասխան տեխնոլոգիայի, ամբարեխցողներ էին շենքեր կառուցել: Շինանյութերը գործադեղ էին բոլոր նրանք, ովքեր կարող էին: Ընդ որում ինչ ստացվեց, մեք ամենքս էլ բացատեղյակ ենք: Տարբերքի խաբել չկարողացան...

Յիշեն մի պատմություն: Կիրովականում ապրում էր մի պատմաբան-հնէաբան, հայրենասեր: Ընդ ինչպես էին 1946 թ. նրանց խաբեությանը սոցիալիստական երկիր բերում, և ինչպիսի գրապարտագրերի գոհ էին դառնում մարդիկ, այժմ մենք լավ գիտենք: Այլ-թայի քարտից հետո լուսահոգի եղիս Սոնյայան իր հավատարիմ կնոջ հետ հայտնվեց տեղակալ քաղաքում և կյանքն անցկացրեց Լոռու տարածաշրջանի պարտերից մեկում: Արտադրիկ կինը տիկին Փեփրոնը, խնդրել էր տանտիրուհուն կաթ վաճառել իրեն:

-Չա, ես վարկյանին, - իրար էր անցել տանտիրուհին: - Չեր աչքի առաջ կլբեն:

Երբ մուրթում տանտիրուհին պատրաստվում էր կթել կովին, վերջինս պատահաբար դիպչում է կաթնամանին, շրջում այն, և այնտեղից թափվում է... Մախապես լցրած ջուրը: Դժվար թե որևէ մեկը գարմանա, որ կաթին էլ են ջուր խառնում... Առավել հետաքրքիր է, թե մեկ ինչ գնով են վաճառում ջուրը, բայց ոչ թե մեր տան ծորակից. դա մեք ինձ մատի պես գիտենք:

Եկեք մտնենք որևէ մթերային խանութ ու տեսենք, թե ինչ ենք գնում: Ոչ ոգելից խմիչքների, լիճնաղների տեսականին մեծ է: Ում որ գեթ մի անգամ վիճակվել է նույնանուն մեղանիքներ

Մ Տ Ի Ո Տ Թ Ե Ր Ը ... Ե Ր Բ Ե Մ Ն Կ Ա Ր Ճ Չ Ե Ն

խմել եվրոպական երկրներում, կարող է զգալ համի բացահայտ տարբերությունը. մեզ մոտ ընպեղիքներն առանձնանում են վատ առումով: Ջուրը դրանցում ավելին է, քան պահանջում է տեխնոլոգիան: Այնուհետև թուղո ոգելից խմիչքներն են. ընտրություն մեծ է. աչքերը շվիւմ են: Դրանքից շատերը, եթե հավատանք պիտակներին, և ի հարկե, գովազդներին, արտադրվել են Ռուսաստանում: Կասկածելից այն է, որ բյուրեղյա մաքուր օրիներից մի քանիսը «կծվում են»: Ընդ ինչից են պատրաստված, արժե խորհրդածել: Փզմների ընտրություն էլ է մեծ: Տպակրիչ պիտակները հետաքրքիր անվանումներով, ոսկեգոծ, կախ ընկած լավ կայծ են ծառայում գնորդների համար: Անկեղծ ասած՝ երբ առաջին անգամ ճանաչեցի խմիչքի, շատ դուր եկավ. գիճին համով էր, գովասանքի արժանի: Չանցավ մի երկու ամիս. նոր չիջ գնելով՝ ես լիովին հիասթափվեցի: Գիճին ջրախառն էր: Կոմյակը, որն առանձնահատուկ ընպեղիք է, մեզ համար ազգային հպարտություն է նաև: Ընդ քանի տարվա հնություն ունի, վկայում են պիտակի աստղերը: Իսկ կոմյակ օգտագործողներից ո՞վ կարող է որոշել, համից զգալ վաղեմությունը: Ստիստը են հավատալ պիտակներին:

Այժմ ուշադրություն դարձնենք երչիկեղենին: Վերջինիս որոշ տեսակների վրա խոնավության շղարշ է նկատվում, նա նրանից է, որ լցումն ի վիճակի չէ երկար պահելու խոնավությունը, ու նաև համն էլ այն չէ, երևում է համեմունքն էլ է անբավարար:

Անդրադառնանք տոմստի մածուկներին: Չենք անվանումը մածուկ, խոնում է այն մասին, որ գաճազվոր որոշակի բանձրություն պետք է ունենա, ինչպես օրինակ, ատամի մածուկը: Եվ ահա, տոմստի մածուկում ջուրն այնքան է, որ եթե անոթը թեքես, անգաճված կոկտեյլ արագորեն ծորալ: Դա գրեթե տոմստի հյութ է:

Մեղր ենք գնում: Փեթակներից նույնպես: Չախանակի է, որ հազարավոր մեղվաբույծներից ոչ մեկը չի խառնում, թե մեղրը թեկուզ դուրզ-ինչ իսկական չէ: Մեղրի որակն ստուգելու բազմաթիվ մեթոդներ կան: Եվ նույնիսկ եթե տանայակ թեստերից մեկը բացասական

արդյունք տա, նշանակում է՝ մեղրի որակը կասկած է հարուցում:

Այժմ բոլորին հասու է դարձել լուսանկարելն ու ֆոտոլաբորատորիայի ծառայություններից օգտվելու հնարավորությունը: Եթե լուսանկարների որակի մասին հետաքրքրվես, ապա միշտ էլ առկա են վկայակոչվող մի քանի բարձրորակ լուսանկարներ: Իրականում, սակայն, որակն զգալիորեն ցածր է: Ինչքան ցածր, այնքան էլ յուրակալած: Ի՞նչ մեր հաշվին լուսանկարի որակը գտել ու ներկայել խնայելը չափազանց հասարակ բան է: Եվ տրոնային սարքավորման ստեղծներին արվում է մի քանի հայում, ինչպես հեռուստացույցի հեռակառավարման վահանակին: Մի քանի վայրկյանում կարելի է նվազեցնել գույների հագեցվածությունը: Լուսանկարներ ստղծներից ոմանք նույնիսկ խնայողություն են անում թղթի չափերում, իհարկե, դարձյալ մեր հաշվին:

Շրջենք շուկաներում. քանի-քանի վաճառանքի կան ձեռնակչեթերներով, վերջիններս շատ հաճախ կշվող ապրանքի իսկական քաշը չէ, որ ցույց են տալիս: Իսկ ինչքան ավանքներ կան գեղեցիկ ձևավորումներով հագուստ, կոշիկ, հեծանվակներ, ռադիոընդունիչներ, ժամացույցներ... Գունավոր մատիտներ ու զարմանազան գործիքներ, որոնք համարյա հետք չեն թողնում թղթի վրա: Բոլորը չես թվարկի... Ապրանքների մեծ մասը միանգամյա օգտագործման համար է պիտանի և արտադրված է Դուբայում, Թուրքիայում, Չինաստանում, այլապես կասկածելի վայրերում:

Այդ, հիմարացնում են մեզ, ինչպես Միկուլախ-Մակայի ժամանակների պատասաններից մեզ սիրուն թափփաբե վաճառելով, դրանով իսկ դատարկելով մեր գրպանների ողջ պարունակությունը: Յիշում են խորհրդային ժամանակների չինական ապրանքները՝ միայն բարձրորակ, այդպես էր պահանջում այն ժամանակվա պետությունը:

Ինչքան որ հնարավոր է գրել խաբեության մասին, վախենում են թուրքը չէրիքի:

Ստեղծում տնտեսական ապրանքների խառնուրդ: Երկրորդ պատրաստված են գերմանական տեխնոլոգիայով: 30 տարի առաջ գերմանական ներկված էինք գրում փայլուն բացիկների վրա

Գերմանայից տուն: Այսքան տարի է անցել, բայց այդ ներկը եղունգով էլ չես կարող քերել բացիկի փայլուն մակերևույթից:

Ճանապարհներ կառուցելը թանկ հաճույք է: Ճանապարհը բազմամիլիոն ծախսեր է պահանջում կայուն արտադրություն: Մեր Ճանապարհների մեծ մասը վերանորոգված, նորացված է դրսից տեսալող գունաների հաշվին: Սակայն կեղծոքի պատճառով կարկատված ճանապարհներն արագորեն անպիտան են դառնում: Քաղաքային ճանապարհների զգալի մասը բանդված է, և մոտ ապագայում դրանք վերանորոգում չի նախատեսվում: Քաղաքակիրք երկրներում երկնից չեղած մեր քաղաքացիները կարծում են, թե այդպես էլ պետք է լինի. ճանապարհները պիտի բանդվեն, պարագպես վերանորոգել է պետք, իսկ իրականում լավ կառուցված ճանապարհը պահպանվում է տասնյակ տարիներ: Կարելի է ճանապարհները ողորկ դարձնել, եթե ճանապարհի կառուցողների ձեռքերը մաքուր են:

Վիճակախաղի տոմսերի ընտրությունն անասինման է, քանաքցի հեղեղված է դրանցով: Քանի՞ մարդ մեկ է տանուլ տա, որպեսզի ինչ-որ պետք չախի:

Չի, պահիրը սովորաբար լինում է միայն մկնորսից: Ի՞նչ են մատուցում մեզ գաճազապային լուսավառնիքները, և ինչպես՞ն տարբերել ճիշտ կեղծոքից: Կա երկուսն լուսավառնիք, ինչպես ձեռնածոկի սարքագույքը: Վերցնենք, օրինակ, գործադրությունը: Վերջին տվյալներով այն նվազել է, գաճազված մարդկանց թիվը աճել է: Չհարավոր է, բայց եթե ծանոթանանք գործադրիչների գրանցման պայմաններին, ապա պարզ կդառնա՝ նրանց առջև չիճովորիներն արգելքներ են դրել: Օրինակ՝ եթե քաղաքացին ոչ իր կնքով աշխատել է մի տարուց էլ պակաս, չի կարող գործադրել համարվել: Իսկ նա փաստացի գործադրվել է, բայց վիճակազրկան տվյալներով գրանցված է որպես աշխատող:

Կարելի է դեռ շատ ու շատ օրինակներ բերել խաբեության, կեղծոքի մասին... Ինչ-որ առումով են կարող են չհամաձայնել Դ. Ֆոնժիգինի հետ: Գրեցե՛ք կամ տուրքեր, բայց դրանք մեզ վրա են դրվում ուշաքանակ... Ո՞վ գիտե. ստի ուղեք... Երբեմն կարճ չեն:

Ռաֆայել ՄՊԱՎԻՍՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ

Վ Ա Ր Դ Ա Վ Ա Ռ Կ Ա Մ Տ Ո Ն Պ Ա Յ Ծ Ա Ռ Ա Կ Ե Ր Պ ՈՒ Թ Յ Ա Ն

Հայոց եկեղեցին բազմաթիվ տոներ ունի, որոնցից առանձնահատուկ են հատկապես հինգը և կոչվում տաղավար տոներ, քանի որ ժողովուրդն անցյալում առանձնահատուկ շուքով էր նշում դրանք, և մեծ տոնախմբություն կազմակերպում: Շատերը դեռ մի քանի օր առաջ գնում էին այս կամ այն սրբատեղին, իրենց հետ տաղավարներ՝ վրաններ տանում և սրտի թրթռով սպասում մոտավորապես տոնին: Այսպես էին վարվում հատկապես Սուրբ Ծննդյան, Սուրբ Հարության կամ Ջատկի օրերին, կամ հաղորդիներից, որ այլ կերպ կոչվում է Վերափոխումն սուրբ Աստվածածնի, ինչպես նաև Խաչվերացից առաջ և Վարդավառի կամ Տիրոջ Պայծառակերպության տոնին:

Իսկ ի՞նչ գիտենք Վարդավառի մասին, ի՞նչ տոն է այն, որտեղի՞ց է գալիս: Արմատները շատ խորն են, սերուն են հնագույն ժամանակներից: Բացատրությունները բազմաթիվ են, գեղեցիկ, հոգեշահ և խորախորհուրդ:

Վարդավառը խորհրդանշում է Նոյի ժամանակներում մարդկության փրկությունը ջրհեղեղից, այդ պատճառով սովորություն կա տոնի օրը միմյանց վարդաջրով ցողելու, որով ավետում ենք, թե Տերն ազատեց մեզ անխուսափելի պատուհասից: Հագարամայակներ անց ինքն ամենագոր Աստված մարդացավ և իր փառքն ամփոփեց կատարյալ մարդկային բնության մեջ ու, նրանում լինելով հանդերձ, մի օր ակնառու կերպով հայտնեց իր Աստվածությունը, այն է՝ պայծառակերպվեց, անասելի լուսավոր հանդերձներով հայտնվեց առաքյալներից երեքին՝ Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին, որոնց ներկայությունը խորհրդանշում էր Տիրոջ երեք առաքիլությունները՝ հավատ, հույս ու սեր: Այդ նրանց ի մտի ուներ, երբ վկայում էր, թե *Ճշմարիտ են ասում ձեզ, որ այստեղ ներկա եղողներից մի քանիսը կան, որոնք մահվան համը պիտի չառնեն, մինչև տեսնեն Աստծո թագավորությունը՝ զորությունով եկած:* Այնչափ կեանքար էր նրա լույսը, որ ավանառեսները վայելեցին երկինքը երկրի վրա ու չէին կամենում վերադառնալ: Ավելին՝ առաքարկեցին երեք վրաններ շինել Տիրոջ և երկու մարգարեների՝ Մովսեսի ու եղիայի համար: Իսկ ինչու՞ հատկապես Մովսեսն ու եղիան էին նրա Աստվածության վկաները, որոնք հայտնվելով՝ խոսում էին Երուսաղեմի մեջ Տիրոջ հետ կատարվելիք դեպքերի մասին՝ չարարարների, խաչելության և փառավոր հարության: Մարգարեներ, որոնցից մեկը Տասնաբանյան պատվիրանները հասցրեց Իսրայելի ժողովրդին, ապագայում՝ նաև համայն մարդկությանը, իսկ մյուսն այնքան շնորհառատ գտնվեց Աստծո առաջ, որ երկինք մտավ՝ մահ չճաշակած, քանի որ մարմնով հափշտակվեց: Այսինքն՝ Տերը դրանով ցույց տվեց իր սահմանած օրենքներով տրվելիք փրկությունից անցումը շնորհով փրկության, որով ակնառու էր դարձնում օրենքը կատարելապես

պահելու անհնարինությունը, և հաստատում իր անսահման ողորմածությունը՝ շնորհատու փրկությամբ:

Այս ավետիսն ամենքիս համար ճառագեց այն օրը, երբ Քրիստոսն այլակերպվեց, երկինքն աղաղակեց նրա Աստվածության մասին, ամառը հովանի եղավ ու մարգարեների հայտնվելով՝ հավիտենությունը բազմեց ժամանակի թագավորության գահին, երկինք ու երկիր մեկ եղան, վերստին փաստվեց, թե չկան ողջեր ու մեռածներ, չկան ծերեր ու մանուկներ, այլ կա անմահ հոգիների հավիտենական թագավորություն, ուր այլևս իշխանություն չունի ժամանակն՝ իր ար-



Համբարձում, Եկեղեցու Ղրիմեղու նկարազարդած Ավետարանից, Ղրիմ, 1658: Բրիտանական գրադարան, Չեռ. N Or. 13895, քերթ 12բ:

բանյակներով: Աաչած այս երկնամվեր տեխիբից՝ առաքյալները Տիրոջից պատվեր առան՝ այդ մասին չհայտնել ոչ ոքի, քանի դեռ չէր եկել պատեհ ժամանակը: Մանավանդ, որ երկու մեծ մարգարեների երևանքը հաջորդեց Աստծո՝ Սուրբ Երրորդության հայտնությունը: Ամառը հովանի եղավ նրանց վրա, և Հայր Աստված ծայնեց ամպի միջից, ասելով. *«Դա՛ է իմ սիրելի որդին, որին հավանել են, դրան լսեցեք»:* Հայրը ծայնեց, Որդին պայծառակերպվեց, և Սուրբ Հոգին ամպով հովանի եղավ: Ասկայն ներկաները, թեև վայելում էին անպատում հրաշքներ, տակավին չէին հասկանում կատարվածի նշանակությունն ու խորությունը: Զետո միայն թե առաքյալներն իրենք և թե՛ հետագայում ապրած եկեղեցու սուրբ հայրերը

մեկնեցին այս հրաշքերի իմաստն ու նշանակությունը: Իսկ պայծառակերպության այս հրաշափառ իրադարձությունը, որ ամենամյա տոնի վերածվեց, և այն էլ տաղավար տոնի, ժողովուրդը կոչեց Վարդավառ, որը շարժական է:

Տոնին նախորդում է շաբաթապաշքը: Այն նշվում է Սուրբ Ջատկի տոնից 98 օր հետո և բոլոր խորհուրդներն իրար կապող մի լուսեղեն շղթա հյուսում՝ զարդարելով մեր Տիրոջ փրկագործության անկրկնելի պատմությունը: Սուրբ հայրերն Օծյալ Փրկչի պայծառակերպությունը համեմատում են վարդի հետ: Ինչպես վարդը կոկոնվում է և ապա բացվում՝ ամենքին երևելի դառնալով, այնպես էլ Քրիստոսը մարդացավ և այլակերպությանը իր Աստվածությունը հայտնեց: Կան ինչպես կոկոն վարդը բացքնում է ծաղկաթերթերի անուշ բույրը, այնպես էլ Քրիստոսը մահկանացու կնոջից ծնվեց, բայց, պայծառակերպվելով, հայտնվեց առաքյալներին՝ որպես անմահ և անվախճան Թագավոր: Վարդը փշերի մեջ է բուսնում, իսկ մեր Տերը հրեաների մեջ երևաց, որոնք էլ խաչեցին նրան: Բացված վարդն անուշ բույր է տարածում, իսկ Քրիստոսն իր պայծառակերպությամբ Թաքոր Լեռան անխառն օրը լցրեց դրախտի բույրով:

Այդ պատճառով ուրախություն է տիրում ամենուր, բոլորը, մանավանդ մանուկները միմյանց վրա ջուր են ցողում՝ ջրի ազդորությունը շեշտելու և Արարչի պատիվն արարածներին չվերաբերելու համար: Իսկ քանի որ ջուրը խորհրդանշում է մարդկության փրկությունը ջրհեղեղից, ապա, ի նշան Նոյի ուղարկած բարի լուր բերող աղավառ, սովորություն կա այդ օրը աղավառներ թռցնել: Աղավառն նաև Սուրբ Հոգու խորհրդանշան է, որ ամպի տեսքով հայտնվեց Քրիստոսի այլակերպության պահին, իսկ մկրտության ժամանակ՝ աղավառակերպ: Ջուրը կյանքի խորհրդանշան է, որի մասին Հիսուսն ինքը վկայեց, թե թույլ կտա խմել իր հավիտենական կյանքի ջրերից, և որ մեկ անգամ խմողն այլևս երբեք չի ծարավի: Ի նշան այս ամենի, նախկինում տոնի օրը քահանաներն իրենք էին ժողովրդին վարդաջրով ցողում: Ավա՛ղ, այս գեղեցիկ սովորությունն այսօր չի պահպանվել:

Հուսանք, որ մեզանում նկատվող հոգևոր զարթոնքը վեր կհանի ժամանակի անհուններում մոռացված շատ ու շատ հրաշալի սովորություններ, և նորոգված մեր հոգիներում կկանթեղվեն նախնայաց աներեր հավատքը, անսպաս հույսն ու անսպասված սերը: Ուստի, մենք էլ, նրանց նմանությամբ, անհուն փափագով աղոթենք Տիրոջը, աղերսենք մեղքերի թողութուն և հոգու փրկություն: Չէ՞ որ երբ մաքրագործվելով հաղորդ եք դառնում այս հրաշքին, ոռոգվում է մեր հոգու այգեստանը, փթթում Աստվածատունը սիրով վարդաստանը, որից քանվում է բարեգործության անուշահոտ ու անուշահամ յուրը... Այսպես կատարվում է Փրկչի այն խոսքը, թե *դուք եք աշխարհի լույսը...*

Նաիրա ՊԵՂՈՆՅԱՆ

Մարդու համար անցյալն ու ներկան միջոցներ են, իսկ գալիքը՝ նպատակ, որի մեջ նա կարող է երջանկություն վայելել: Ելնելով նրանից, որ մարդ արարածն օժտված է բնատուր ձգտումներով, բնականաբար և հարկադրաբար, իբրև այս ամենի հանրագումար, ձգտում է կատարյալին, սակայն հազիվ գոհանալով՝ նորից փնտրուդի մեջ է ընկնում գտնելու համար երջանկությունը, որը, սակայն, իբրև վերջնանպատակ, նա չի կարող ունենալ: Մարդու մեջ եղած այդ հավիտենական ձգտումն իր կատարյալ ամբողջացումն ու գոհացումը կարող է գտնել երկնքում, որի

Ա Յ Ս Ա Յ Ն Ա Ր Կ Ի Ց Վ Ե Ր

մասին մեր Տերն ասում է, թե *«Գանձեր մի՛ դիզեք երկրի վրա, ուր ցեց և ծանց ոչնչացնում է... այլ գանձեր դիզեք երկնքում, ուր ոչ ցեց, ոչ ծանց չեն ոչնչացնում»* (Մատթեոս:2:19):

Յուրաքանչյուր ոք ձգտում է երջանիկ լինել, որովհետև մարդու բնական նպատակն այլ բան չէ, քան բարձրագույն արժեքներով կյանքը: Զետևար, եթե այս աշխարհում այդ ձգտումը չի կարող իր լիակատար ամբողջացումը գտնել, դա ինքնին վկայում է, որ այս աշխարհից վեր մի բարձրագույն իրո-

դություն կա, որտեղ էլ մարդն այդ փափագ կարող է գոհացնել:

Ասկայն հարց է, թե որն է այդ բարձրագույն իրողությունը, և ինչ ճանապարհով կարելի է դրան հասնել, որտեղ կան մարդկանց մտքից վեր, մարդուն անհասկանալի և միայն հավատով ընկալելի իրողություններ:

Մարդու նպատակն է հասնել ի սկզբանե խոստացված հավիտենական կյանքին, որն իր լրումն է գտնում Քրիստոսով՝ իբրև անցնելիք ճանապարհ, Քրիստոսի միջոցով՝ իբրև ընդունելիք

ճշմարտություն, Քրիստոսի մեջ՝ իբրև հավիտենական կյանք, ինչպես կարգված է. *«Եղիցի, եղիցի և եղիցի կատարումն օրինաց և մարգարիցից»*, և ինչպես հենց ինքն ասաց. *«ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը»* (Հովհաննես:ժԳ:6): ահավասարի այս նախադասության մեջ են ներամփոփված մարդ արարածի և մասնավորաբար՝ քրիստոսյան հավատացյալի թե՛ ձգտումը, թե՛ անցնելիք ճանապարհը և թե՛ մարդկային արարչագործության նպատակն ու ելությունը:

ԽՈՐԵՆ ԱՍՏԻՎԱԿԱԾ ԱՆՆՈՒՄ

ՄԵՐ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԸ

Սիրելի՛ ընթերցող, եթե ցանկանում եք Ձեր դիտարկումներով օգնել «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթի առավել արդյունավետ ու նպատակային աշխատանքին, խնդրում ենք լրացնել սույն ձևաթերթիկը և ուղարկել խմբագրություն: Ձեզից ընդամենը պահանջվում է լինել անաչառ և արագ արձագանքել: Կանխավ շնորհակալ ենք:

1. Ըստ Ձեզ՝ մեր հասարակության մեջ զարգացած է իրավական մշակույթը:

- Ոչ
 Մասամբ
 Այո

2. Հասարակությունն իրագեղ է իր իրավունքներին:

- Ոչ
 Մասամբ
 Այո

3. Թերթը խրախուսում է մարդու իրավունքների պաշտպանությունը:

- Չի խրախուսում
 Մասամբ է խրախուսում
 Խրախուսում է

4. Թերթն արձարծո՞ւմ է հասարակությանը հուզող հարցեր:

- Ոչ
 Մասամբ
 Այո

5. Ի՞նչ բեմաների շուրջ հողվածներ կցանկանայիք կարդալ մեր թերթի էջերում:

Կարող եք լրացնել նաև Ձեր տվյալները՝
անուն, ազգանուն
հասցե
հեռախոս
էլ. փոստ

Սիրելի՛ ընթերցող, լրացված ձևաթերթիկը խնդրում ենք ուղարկել ՀՍԻԿ գրասենյակ՝ ՀՀ, Լոռու մարզ, Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2 հասցեով, մինչև օգոստոսի 31-ը՝ ժամը 17:00: Կարելի է պատասխաններն ուղարկել նաև էլ փոստով՝ lc@acrpc.am կամ ֆաքսով՝ +374(322) 4-47-81:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՐՏԻՅ ՀՐԱԾԱՐԿԱԾ ԲԱՐԱՔԱՅԻՆԵՐԻՆ 2005-2006ՐԱԸ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԳՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2006 թ. հոկտեմբերի 4-ի՝ Սահմանադրական դատարանի ընդունած հայտնի որոշումից հետո ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանություններից պահանջներին համապատասխան գործնական քայլեր կատարելու համար:

Ի վերջո, 5 օրենքներում (Սոցիալական քարտերի մասին, Պետական կենսաթոշակների մասին, Պետական նպատների մասին օրենքներում և Աշխատանքային ու վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերում) կատարվեցին փոփոխություններ և լրացումներ, որոնց կատարումն ապահովելու նպատակով գործադիր ընդունեց 3 որոշում (369-Ն, 370-Ն, 371-Ն):

Քաղաքացիների խախտված իրավունքների վերականգնման համար նշված իրավական ակտերից առավել հրատապը կառավարության 2007 թ. մարտի 1-ի ընդունած թիվ 369-Ն «Սոցիալական ապահովության քարտ չունեցող անձանց 2005 թվականի և 2006 թվականի պետական նպատները նշանակելու և վճարելու, սոցիալական ապահովության իրավունքների վիճադատության հարցեր վարչական կարգով լուծելու մասին» որոշումն է:

Նշված որոշմանը սահմանվել է սոցիալական քարտից հրաժարված քաղաքացիներին 2005-2006 թթ. ընթացքում չվճարված գումարների վճարման կարգը:

Հազարավոր քաղաքացիներ բավականին երկար ժամանակ ավելի քան 2 տարի, սպասել և հուսացել են, որ իշխանությունները որոշակի քայլեր կձեռնարկեն իրենց խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ: Ինչպես նշվեց, կառավարությունը ըստ էության միջոցներ է ձեռնարկել ընդունելով համապատասխան որոշում, և թվում է, թե խնդիրն այլևս լուծված է:

Սակայն, կառավարության սահմանած կարգը լավագույն դեպքում կարող է խնդիրն մասնակի լուծում տալ:

Իսկ խնդիրն այն է, որ 2005-2006 թթ. ընթացքում չվճարված գումարները ստանալու համար, համաձայն որոշման, քաղաքացիները պետք է լիազոր մարմին դիմեն մինչև 2007 թ. հուլիսի 1-ը: Որոշումն ընդունվել է (նախագահի կողմից վավերացվել է) 2007 թ. ապրիլի 12-ին և հրապարակվել է 2007 թ. ապրիլի 25-ին (Պաշտոնական տեղեկագիր N 22): Այնուհետև էլ, որ մայիս-հունիս ամիսներին ընթացքում հնարավոր չէր որոշման մասին իրագեղել բոլոր այն քաղաքացիներին (իսկ դրանց թիվը համրապետությունում հաշվվում է հազարներով), ովքեր 2005 թ. հունվարից մինչև 2007 թ. ապրիլի 25-ը, այսինքն 28 ամիս սպասել են իրենց խախտված իրավունքների վերականգնմանը:

Ստորև ներկայացված է կառավարության որոշման ոչ պատշտական պարզեցված բովանդակությունը, որը կարող է օգտակար լինել բոլոր այն քաղաքացիներին համար, ովքեր 2005-2006 թթ. սոցիալական քարտից հրաժարվելու պատճառով չեն ստացել պետական նպատները:

Սոցիալական քարտից հրաժարված քաղաքացիները 2005-2006 թթ. ընթացքում չվճարված պետական նպատների՝ * ընտանեկան նպաստի,

* երեխայի ծննդյան միանվագ նպաստի,

* հանրակրթական դպրոցի առաջին դասարան ընդունվելու միանվագ դրամական օգնության,

* հուղարկավորության միանվագ դրամական օգնության,

* Նախկին ԽՍՀՄ խնայարանի ՀՀՍՀ հանրապետական բանկում ներդրած ավանդի դիմաց փոխհատուցման ստացման համար ՀՀ կառավարության 2007 թ. մարտի 1-ի թիվ 369-Ն որոշման համաձայն պետք է դիմեն իրենց բնակության վայրի սոցիալական ծառայություն մինչև 2007 թ. հուլիսի 1-ը:

Նշված նպատների վճարման համար սահմանվել է հետևյալ կարգը՝

* Ընտանեկան նպաստ

Ընտանեկան նպաստի իրավունքը ճանաչվում է, եթե համախորհի (քաղաքացու) ընտանիքը հաշվառված է անապահովության գնահատման համակարգում և 2005 թ. հունվարի 1-ի դրությամբ ու դիմելու օրվա դրությամբ փաստագրման տվյալներով բարձր է տվյալ ժամանակահատվածի համար սահմանված անապահովության միավորից:

Եթե ընտանիքի անապահովության միավորը 2005 թ. հունվարի 1-ի դրությամբ բարձր է տվյալ ժամանակահատվածի համար սահմանված միավորից, սակայն դիմելու օրվա դրությամբ ցածր է, ապա ընտանեկան նպաստի վճարման հարցը և դրա չափը լուծվում են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վարչական լուծումներ իրականացնող հանձնաժողովի կողմից:

* Երեխայի ծննդյան միանվագ նպաստ

Երեխայի ծննդյան միանվագ նպաստ վճարվում է, եթե երեխայի ծնվելուց հետո սահմանված տասներկուամսյա ժամկետում ծնողը դիմել է, և դիմումը հաշվառվել է, սակայն գումարը չի վճարվել՝ քարտի բացակայության պատճառով:

* Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի վճարում:

Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը վճարվում է, եթե երեխայի ծնվելուց հետո սահմանված տասներկուամսյա ժամկետում ծնողը դիմել է, և դիմումը հաշվառվել է, սակայն գումարը չի վճարվել՝ քարտի բացակայության պատճառով:

* Երեխայի հանրակրթական դպրոցի առաջին դասարան ընդունվելու միանվագ դրամական օգնություն

2005-2006 թթ. ընթացքում, ինչպես նաև 2005 թ. կամ 2006 թ. համար ընտանիքի նպաստի իրավունքի ճանաչման դեպքում կատարվում է երեխայի հանրակրթական դպրոցի առաջին դասարան ընդունվելու միանվագ դրամական օգնության գումարների վճարում:

* Հուղարկավորության կապակցությամբ միանվագ դրամական օգնություն

2005-2006 թթ. ընթացքում, ինչպես նաև 2005 թ. կամ 2006 թ. համար ընտանիքի նպաստի իրավունքի ճանաչման դեպքում կատարվում է հուղարկավորության կապակցությամբ միանվագ դրամական օգնության գումարների վճարում:

* Նախկին ԽՍՀՄ խնայարանի ՀՀՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թ. հունիսի 10-ը ներդրած

դրամական ավանդի դիմաց փոխհատուցում

Նախկին ԽՍՀՄ խնայարանի ՀՀՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թ. հունիսի 10-ը ներդրած դրամական ավանդի դիմաց փոխհատուցում կատարվում է, եթե վերականգնվում է ընտանիքի ընտանեկան նպատի իրավունքը 2005 թ. հուլիսի 1-ից մինչև 2006 թ. ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածի համար, ինչպես նաև դիմումատուսն դասվում է ՀՀ 2006 թ. պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի թիվ 8 հավելվածի 2-րդ կետով նախատեսված սոցիալական որևէ խմբի:

Վճարման գործընթաց

Վճարման գործընթացը կազմակերպվում է պահանջվող փաստաթղթերի ներկայացման դեպքում: Ի թիվս պահանջվող հիմնական փաստաթղթերի (ընտանիքի սոցիալական անձնագիր, անձնագիր և այլն), քաղաքացին պետք է ներկայացնի նաև տեղեկանք՝ սոցիալական քարտ չունենալու մասին:

Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում հարուցվում է վարչական վարույթ: Համաձայն օրենքի վարչական վարույթի տևողության առավելագույն ժամկետը 30 օր է: Բացառիկ դեպքերում, եթե սոցիալական ծառայության տարածքային կենտրոնին անհուսալիք է լրացուցիչ տեղեկություններ, այդ ժամկետը կարող է երկարաձգվել առավելագույնը 30 օր ժամանակով:

Ժամկետի երկարաձգման վերաբերյալ պետք է ընդունվի համապատասխան որոշում և տրամադրվի քաղաքացուն: Միաժամանակ, քաղաքացին, ու ոչինչում բժնարկվում է, իրավունք ունի մասնակցելու վարչական վարույթի ամբողջ ընթացքին:

Սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքի տրամադրման և ստացման կարգ

Տեղեկանքը հատկացվում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բացառապես ներկայացրած դիմումի հիման վրա:

Ի տարբերություն սոցիալական քարտի, տեղեկանքի վրա նշվող համար տեղեկանքի հերթական համարն է, որը փոփոխական է՝ Նոր տեղեկանք ստանալու դեպքում քաղաքացուն տրամադրվում է տեղեկանք՝ այլ համարով:

Հ.Գ. Այն քաղաքացիները, ովքեր մինչև 2007 թ. հուլիսի 1-ը չեն հասցրել դիմել իրենց բնակության վայրի սոցիալական ծառայություն 2005-2006 թթ. ընթացքում սոցիալական քարտից հրաժարվելու պատճառով չվճարված պետական նպատները ստանալու համար, ՀՀ կառավարության 2007 թ. մարտի 1-ի թիվ 369-Ն որոշման գործողության ժամանակահատվածի ընթացքում չեն կարող դիմել ՀՀՍՀ գրասենյակ (ՀՀ, Լոռու մարզ, Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2):

Ծրագիրն իրականացվում է Քուրնեթրիարթ ինթերնեյշլ ԲՇԴ և «ԴԿ Լեմերոն» ԲԶԶ ՀԿ/Դուրմասիյն մասնաճյուղի աջակցությամբ:

Կրայիկ ՊՊՊԿՍՆ

Թերթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Երկշաբաթաթերթի բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանարկական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիմել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշման արտացոլող փաստաթուղթ:
Հրատարակության 4 տարի
Հիմնադիր և հրատարակիչ
Հայկական սահմանարկական իրավապաշտպան կենտրոն
ՀՀ, 2002 թ. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Ֆոն: +374 (322) 2-29-57
Ֆաքս: +374 (322) 4-47-81
Էլ. փոստ՝ lc@acrpc.am
Համացանցի էջ՝ www.acrpc.am
Գլխավոր խմբագիր՝ Հրաչյա ՍՈՐՈՒՄՆԸ
Խմբագիր՝ Լուսինե ՍԱՀՆԻՎԱՅՆ
Համակարգչային ձևավորող՝ Լարինե ԱՇՐԱՅԱՆ
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Սեքրետները անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթին» պարտադիր է:
Հրատարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:
Ծավալը՝ 2 տպագրական մասով:
Ստորագրված է տպագրության 2007թ.07.13:
Տպագրանալ՝ 2000:
Տպագրվել է «Չանգակ-97» հրատարակչատանը:
Իրավական մշակույթ
Legal Culture
Проевая культура
Տարածվում է անվճար